# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040, 0322 22648, vanadzor.lori@mta.gov.am

N 01/4569 27 մայիս 2026թ.

ՍԵՅՐԱՆ ՍԱՖԱՐՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ Ա/Ձ
ԱՁ ՍԵՅՐԱՆ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի Սեյրան Սաֆարյան

Վանաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և Սեյրան Ստյոպայի Սաֆարյան ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «12» դեկտեմբերի 2025թ. կնքվել է Վանաձոր համայնքի կարիքների համար սանիտարական ծառայությունների մատուցման գնման թիվ «ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-26/03» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 2.1.3 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտել է ծառայության մատուցման ժամկետը:

Կատարողի կողմից թույլ են տրվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների էական և պարբերական խախտումներ:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement..am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը.

**Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ ԵՄ.**

1. Վանաձորի համայնքապետարանը միակողմանիորեն հրաժարվում է թիվ «ՀՀ ԼՄՎՀ ԳՀԾՁԲ-26/03» ծածկագրով Պայմանագրից և համարում է այն լուծված:
2. Սույն ծանուցումը www.procurement..am կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված:
3. Կատարողի նկատմամբ կիրառվելու են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները (տուժանք, տուգանքներ)՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Կից ներկայացվում են խախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունը և լուսանկարները:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

*Կատ. Գնումների բաժնի պետ՝ Դավիթ Հակոբյան*
*+37460650369*